ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ս. Ս. ԹՈՎՄԱՍՅԱՆ
Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի դիրեկտոր, փիլիսոփայական գիտությունների թեկնածու

Գ. Հ. ԴՐԻԳՈՐՅԱՆ
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու

Ինստիտուտը ստեղծվել է ԳԱ փիլիսոփայության և իրավունքի սեկտորի հիման վրա, որը զարգացման քառորդդարյա ուղի էր անցել արդեն և բանակցելս ու որակապես նախապատրաստված էր այդպիսի վերակառուցման համար:

Փիլիսոփայական այս հաստատության պատմությունն սկսվում է 1943 թ.. Երբ ԳԱ պատմության ինստիտուտի կազմում հիմնվում է նաև փիլիսոփայության սեկտոր: 1945 թ. սեկտորն անջատվում է պատմության ինստիտուտից և դառնում ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքին ենթակա առանձին գիտական հաստատություն: Մինչև 1950 թ. սեկտորի կազմը շատ փոքրաթիվ էր՝ ընդամենը 4—6 գիտաշխատող: Սեկտորն սկսում է մեծանալ հիմնականում 1951—52 թթ., ի հաշիվ նորավարտ ասպիրանտների: Երիտասարդ կադրերի ներհոսքը ընդարձակում է նաև գիտահետազոտական աշխատանքների պրոբլեմները ու թեմաները: 1959 թ. փիլիսոփայության սեկտորում ստեղծվում է իրավունքի խումբ և այդ կապակցությամբ սեկտորը վերանվանվում է «Փիլիսոփայության և իրավունքի սեկտոր»: 1964 թ. ԳԱ նախագահությունը հաստատում է սեկտորի կառուցվածքը, որն ընդգրկում էր դիալեկտիկական մատերիալիզմի և բնագիտության փիլիսոփայական հարցերի, պատմական մատերիալիզմի և գիտական կոմունիզմի, փիլիսոփայության պատմության, էսթետիկայի, իրավունքի խմբերը: Այս խմբերը, 1969 թ. փիլիսոփայության և իրավունքի սեկտորն ինստիտուտի վերակառուցելու ժամանակ, հիմք ծառայեցին ինստիտուտի համապատասխան բաժիններն ստեղծելիս: Լրացուցիչ ստեղծվեց կոնկրետ սոցիոլոգիական հետազոտությունների բաժին և նախատեսվում է հետագայում ստեղծել հոգեբանության բաժին:

Փիլիսոփայության սեկտորի ստեղծումը և նրա հետագա աճը մեծ չափով նպաստեց Հայաստանում փիլիսոփայության պրոբլեմների սիստեմատիկ հետազոտությանը: Կարճ ժամանակամիջոցում այդ հաստատությունը դարձավ փիլիսոփայական, հետագայում նաև իրավագիտական, մտքի հանաչված կենտրոն: Ինստիտուտն այժմ ունի ավելի քան 60 աշխատակից, որոնցից 25-ը գիտության դոկտորներ ու թեկնածուներ են: Ակադեմիայի փիլիսոփայական հաստատությունն իր գոյության տարիներին հրատարակել է մոտ 70 անուն մենագրություններ ու ժողովածուներ նվիրված դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմի, բնագիտության փիլիսոփայական հարցերին, փիլիսոփայության պատմության, տրամաբանության, էթիկայի, էսթետիկայի, աթեիզմի, իրավունքի պրոբլեմներին և բուրժուական փիլիսոփայության քննադատությանը:

Դիալեկտիկական մատերիալիզմի պրոբլեմներից առավել չափով ուսումնասիրվել են իմացության պրոցեսի հետ առնչվող խնդիրներ և հրատարակվել են մի շարք հետաքրքրական հետազոտություններ՝ օրինակ, Հ. Ա. Գևորգյանի «Իմացության մեջ աբստրակցիայի դերի մասին», «Հիպոթեզը և նրա դերը գիտության մեջ», «Հավանական և հավաստի գիտելիք», Լ. Հ. Աբրահամյանի «Ազ-

դանշան և պայմանական ռեֆլեքս», «Նշանների տեսության իմացաբանական պրոբլեմներ» աշխատությունները: Մենագրական աշխատանքներ են հրատարակվել նաև ագնոստիցիզմի էության և բնույթի բացահայտման (Ա. Մ. Էկմալյան) և սոֆիստիկայի բնույթի (Վ. Գ. Օսիպովա) վերաբերյալ: Վերջին տարիներս մի խումբ գիտաշխատողներ Հ. Գևորգյանի ղեկավարությամբ սկսել են ուսումնասիրել գիտության տրամաբանության և մեթոդոլոգիայի պրոբլեմը: Արդեն հրատարակվել է «Գիտական իմացության տրամաբանական վերլուծության փիլիսոփայական հարցեր» ժողովածուի առաջին պրակը և պատրաստվում է երկրորդը: Դիալեկտիկայի կատեգորիաներից ուսումնասիրության բեման են դուրս եկել հնարավորության և իրականության (Ղ. Բ. Վարդապետյան), բացասման բացասումի (Լ. Հ. Աբրահամյան) ու պատճառ և նպատակ (Վ. Խ. Բաղդասարյան) կատեգորիաները:

Բնագիտության փիլիսոփայական հարցերից հրատարակվել է երկու աշխատանք՝ «Տարածության և ժամանակի պրոբլեմը հարաբերականության տեսության լույսի տակ» ու «Մաթեմատիկան և իրականությունը» (Ա. Հ. Ավետիսյան): Երկու աշխատանք է հրատարակվել նաև նվիրված մաթեմատիկական տրամաբանությանը. դրանք են՝ Դ. Ա. Բրուտյանի «Մաթեմատիկական տրամաբանության փիլիսոփայական ներածություն» և Ս. Հ. Ավետիսյանի «Մաթեմատիկական տրամաբանության հիմնական տարրերը» աշխատանքները:

Պատմական մատերիալիզմի հարցեր լուսաբանող հրատարակություններից պետք է հիշատակել Խ. Ն. Մոմջյանի «Լաֆարգը և մարքսիստական տեսության մի քանի հարցեր», «Սոցիալիստական հասարակությունը և մասսաների ստեղծագործական ակտիվությունը», Ա. Մ. Ոսկանյանի «Աշխարհագրական միջավայրի դերի մասին հասարակության զարգացման մեջ», Մ. Ա. Դանիելյանի «Մտավոր և ֆիզիկական աշխատանքի հակադրության մասին», Ս. Ս. Թովմասյանի «Աշխատանք և տեխնիկա», Ա. Մ. Թելունցի «Սոցիալիստական հասարակության մեջ գիտության զարգացման պայմաններն ու տարածնահատկությունները», Է. Ս. Մարգարյանի «Կուլտուրայի տեսության ուրվագծեր», Մ. Հ. Անտոնյանի «Սոցիալիզմի ժամանակ օբյեկտիվ պայմանների և սուբյեկտիվ գործոնի փոխհարաբերությունը» մենագրությունները:

Իր գոյության տարիների ընթացքում փիլիսոփայական հաստատությունը լուրջ նվաճումների է հասել փիլիսոփայության պատմության և հատկապես հայ փիլիսոփայական ու հասարակական-քաղաքական միտքը լուսաբանելու բնագավառում: Մենագրություններ են հրատարակվել նվիրված միջնադարյան հայ ականավոր մտածողներ Եզնիկ Կողբացու, Դավիթ Անհաղթի փիլիսոփայությանը (Վ. Կ. Զալոյան), Անանիա Շիրակացու աշխարհայացքին (Գ. Տ. Խրլոպյան), Հովհաննես Սարկավագի, Հովհաննես Երզնկացու, Վահրամ Բաբունու (Գ. Հ. Գրիգորյան), ինչպես նաև Գրիգոր Տաթևացու փիլիսոփայական հայացքներին (Ս. Ս. Արևշատյան): Հրատարակվել են Վ. Կ. Զալոյանի «Հայ փիլիսոփայության պատմություն», «Հայկական ռենեսանս» ուշագրավ աշխատանքները: Նոր ժամանակների հայ հասարակական գործիչներից ու մտավորականներից քննության առարկա են հանդիսացել XVIII դ. հայ ազատագրական շարժման ներկայացուցիչներ Հովսեփ Էմինի, Շահամիր Շահամիրյանի, Մովսես Բաղրամյանի, ինչպես նաև Մեսրոպ Թաղիադյանի (Գ. Հ. Գրիգորյան), Արսեն Բագրատունու, Անառն Գարագաշյանի, Նահապետ Ռուսինյանի (Ա. Մ. Թևոսյան) և ուրիշների հայացքները: Ուսումնասիրություններ են հրատարակվել նաև հայ

իրականության մեջ մարքսիզմ-լենինիզմի գաղափարների տարածման ու անվանի հայ մարքսիստների վերաբերյալ (Լ. Հ. Աբրահամյան, Յա. Ի. Խաչիկյան): Նշանակալի նվաճումներ կան հայ փիլիսոփայական մտքի ակնառու ներկայացուցիչների աշխատությունների գիտական հրատարակության գործում: Առ այսօր բնագրով, կամ ռուսերեն թարգմանությամբ (կամ երկուսը համատեղ) լույս են տեսել Եղիկ Կողբացու, Դավիթ Անհաղթի, Հովհան Որոտնեցու, Դալուստ Կոստանդյանի աշխատանքները:

Սիստեմատիկ հետազոտություններ են տարվել նաև էսթետիկայի բնագավառում: Ուսումնասիրություններ են հրատարակվել նվիրված արվեստի ստեղծագործությունների գնահատման օբյեկտիվ չափանիշների (Ս. Ս. Թովմասյան), արվեստի ճանաչողական նշանակության հարցերին, աբստրակցիոնիզմի քննադատությանը (Յա. Ի. Խաչիկյան), ինչպես նաև լույս է ընծայվել էսթետիկայի հարցերին նվիրված ժողովածու: Աշխատանքներ են տարվում (Յա. Ի. Խաչիկյանի ղեկավարությամբ) նաև հայ էսթետիկական մտքի սիստեմատիկ պատմությունը շարադրելու ուղղությամբ: Ուսումնասիրություններ են հրատարակվել նվիրված Մ. Նալբանդյանի (Ժ. Ս. Ստեփանյան), Ստ. Պալասանյանի (Ս. Ս. Թովմասյան) և այլոց էսթետիկական հայացքների բացահայտմանը:

Մի շարք աշխատանքներ են հրատարակվել նվիրված բուրժուական փիլիսոփայության և սոցիոլոգիայի քննադատությանը, որոնցից պետք է հիշատակել Դ. Ա. Բրուտյանի «Ընդհանուր սեմանտիկայի իմացության տեսությունը», Հ. Դ. Ասլանյանի «Առաջադիմության գաղափարը բուրժուական պատմափիլիսոփայության մեջ», Է. Ս. Մարգարյանի «Լոկալ քաղաքակրթությունների կոնցեպցիայի մասին», Ս. Դ. Ալախվերդյանի «Նեոպոզիտիվիզմը ժամանակակից սոցիոլոգիայում» աշխատանքները:

Աթեիզմի հարցերին են նվիրված Վ. Ղ. Սեյսնի «Կոմունիստական և կրոնական բարոյականության հակադրությունը», Թ. Ս. Իսայանի «Գերցենի աթեիզմը», «Կոսմոգոնիան կրոնի դեմ» և «Քրիստոնեական սոցիալիզմի» ռեակցիոն էությունը» աշխատանքները:

Իրավաբանության ասպարեզում աշխատանքներն ընթացել են հիմնականում երկու ուղղությամբ. սովետական հանրապետությունների ազգային-պետականությունների կառուցվածքը և քրեական իրավունքի հետ կապված խնդիրները: Հրատարակվել են Ա. Զ. Բեգյանի «Սովետական հայկական պետության կազմավորումն ու ամրապնդումը» և «Սովետական պետականության զարգացումը Հայաստանում», Ս. Ս. Մամյանի «Ժողովրդական դատարանի դաստիարակիչ դերը» և «Նախաքննություն և հետաքննություն» աշխատանքները, ինչպես նաև Ս. Ս. Մամյանի և Կ. Ա. Լալայանի համատեղ աշխատանքը նվիրված դիտավորյալ սպանությունների և դրանց դեմ պայքարի միջոցների խնդրին:

Փիլիսոփայությանը և իրավաբանությանը վերաբերող վերոհիշյալ մենագրական հետազոտություններից բացի, ԳԱ փիլիսոփայական հաստատության գիտական աշխատողները բազմաթիվ հոդվածներ են հրատարակել ինչպես տեղական, այնպես էլ միութենական պարբերականներում: Նրանք ակտիվորեն մասնակցել են համամիութենական այնպիսի հրատարակությունների, ինչպիսիք են համաշխարհային փիլիսոփայության պատմության, ՍՍՀՄ ժողովուրդների փիլիսոփայության պատմության, էսթետիկայի պատմության և այլ

բազմահատորյակների, սովետական մեծ ու փոքր և փիլիսոփայական հանրագիտարանների և այլ բնույթի գիտական հրատարակությունների աշխատանքներին:

Իր գոյության տարիների ընթացքում փիլիսոփայական հաստատությունը լուրջ աշխատանքներ է ծավալել փիլիսոփայության և իրավագիտության բնագավառներում կադրեր պատրաստելու ուղղությամբ: Բավական է նշել, որ այսօր փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտում աշխատող գիտությունների թեկնածուի և դոկտորի կոչում ունեցող գիտաշխատողների ենթող մեծամասնությունը անել ու գիտական կոչում են ստացել ինստիտուտի ներսում: Ինստիտուտի անեցրած գիտական աստիճան ունեցող կադրերը, որոնց թիվը մոտ չորս տասնյակի է հասնում, այսօր հաջողությամբ աշխատում են ոչ միայն մեր հանրապետության, այլև Միության բազմաթիվ քաղաքներում: Բացի այդ, ինստիտուտը քննարկել ու պաշտպանության է երաշխավորել բազմաթիվ թեկնածուական, ինչպես նաև դոկտորական դիսերտացիաներ:

Գիտահետազոտական աշխատանքների գաղափարական-տեսական մակարդակը բարձրացնելու և հետազոտվող պրոբլեմների հաջող լուսաբանման նպատակով հանրապետության, ինչպես նաև Միության փիլիսոփայական հիմնարկների հետ համատեղ կազմակերպվել են մի շարք գիտական նստաշրջաններ, ընդլայնված նիստեր: Գիտական նստաշրջան է գումարվել նվիրված Հայաստանում վերածնության հարցին, Անդրկովկասյան ժողովուրդների փիլիսոփայական ու հասարակական-քաղաքական մտքի պատմության հարցերին՝ Անդրկովկասի հանրապետությունների փիլիսոփաների մասնակցությամբ, դիալեկտիկական մատերիալիզմի և ժամանակակից բնագիտության պրոբլեմներին, որին մասնակցում էին մեր հանրապետության բնական գիտությունների տարբեր բնագավառների ներկայացուցիչներ: Նստաշրջան է գումարվել նաև բուրժուական փիլիսոփայության քննադատության, պատմական մատերիալիզմի և էսթետիկայի մի շարք առանցքային պրոբլեմների վերաբերյալ և այլն:

Հիմնարկի գիտական աշխատողներն ակտիվորեն մասնակցել են բազմաթիվ համամիութենական, ինչպես նաև միջազգային կոնգրեսների, սիմպոզիումների, խորհրդակցությունների: Մեզ մոտ հյուր են եղել նաև արտասահմանյան (ԱՄՆ, Ճապոնիա, Չեխոսլովակիա, Ռումինիա, Լեհաստան) փիլիսոփաներ:

Այժմ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի գիտական գործունեության հիմնական ուղղություններն են.

ժամանակակից գիտության զարգացման փիլիսոփայական, մեթոդոլոգիական, սոցիոլոգիական և իրավական հարցերի կոմպլեքսային հետազոտություն,

գիտական իմացության տրամաբանական վերլուծության փիլիսոփայական պրոբլեմների ուսումնասիրություն,

ժամանակակից բնագիտության փիլիսոփայական հարցերի ուսումնասիրում,

հայ փիլիսոփայական և էսթետիկական մտքի պատմության ուսումնասիրում և հայ հին մտածողների երկերի գիտական հրատարակում,

պետության և իրավունքի տեսության ու պատմության հարցերի ուսումնասիրում, ՀՍՍՀ օրենսդրության կատարելագործում:

Ինստիտուտի գիտահետազոտական այս հիմնական ուղղությունները խրախուսանքի են արժանացել ՍՍՀՄ ԳԱ փիլիսոփայության ինստիտուտի ընդլայն-

ված նիստում, ինչպես նաև սոցիալիստական երկրների փիլիսոփայության և սոցիոլոգիայի ինստիտուտների դիրեկտորների միջազգային խորհրդակցության ժամանակ. որը տեղի է ունեցել 1970 թ. հունիսին, Զակոպանեում (Լեհաստան):

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐ

Հ. Գ. ԻՍՀԻՍՅԱՆ

Արևելագիտության սեկտորի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու

Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցությամբ իր զարթոնքն ապրող, իրենց հայրենիքի ազատության ու անկախության համար պայքարող և քաղաքական ակտիվ կյանքի ուղին բռնած Արևելքի ժողովուրդները վերջին կես դարում արժանացան ոչ միայն քաղաքական ու պետական գործիչների, այլև գիտնական-արևելագետների հատուկ ուշադրությանը:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից անմիջապես հետո, 1920 թ. բացվում է Երևանի պետական համալսարանը, որտեղ նախատեսվում էր հիմնել նաև արևելագիտության ֆակուլտետ: Սակայն արևելագիտական տարկաների դասավանդումը սկսվում է միայն 1923-ից, իսկ 1934 թ. մտցրվում է արևելքի երկրների պատմության հատուկ դասընթաց: Հետագայում՝ 1940 թ. կազմակերպվում է արևելյան լեզուների և գրականության ամբիոնը, իսկ բանասիրական ֆակուլտետի կազմում ստեղծվում է արևելյան բաժին երկու ճյուղով՝ պարսկերեն և արաբերեն լեզու և գրականություն: 1962 թ. մտցրվում են նաև թուրքերեն լեզուն ու գրականությունը:

Նախապատրաստական այդ միջոցառումները հնարավորություն տվեցին 1968 թ. սեպտեմբերի 1-ին բացել ինքնուրույն արևելագիտական ֆակուլտետ՝ երկու մասնագիտական ուղղություններով՝ Մերձավոր ու Միջին Արևելքի ժողովուրդների լեզու-գրականություն և պատմություն:

Կազմակերպական միջոցառումներին զուգահեռ Երևանի պետական համալսարանում կատարվում է լուրջ գիտահետազոտական և հրատարակչական աշխատանք: Լույս են տեսնում Հ. Աճառյանի Արմատական բառարանը, Հայոց լեզվի պատմությունը՝ պարսկական, ասորական, արաբական, թուրքական փոխառություններին նվիրված բաժիններով, լիակատար բերականությունը, որտեղ հարուստ նյութ կա իրանական և սեմական լեզուների մասին: Օտար աղբյուրները հայերի մասին մատենաշարով լույս են տեսնում Հ. Աճառյանի աշխատությունները Ֆիրդուսու և Իբն-ի-Բատուտայի մասին: Հրատարակվում են նրա պատրաստած վավերագրերը հայ-պարսկական հարաբերությունների մասին, պարսկերեն լեզվի ձեռնարկը, պարսկական հատընտիրը և այլ աշխատություններ:

Ակադեմիկոս Հ. Մանանդյանը լույս է ընծայում իր ֆունդամենտալ ուսումնասիրությունները՝ Հայ ժողովրդի ինքնակամ պատմություն, Հայաստանի քաղաքները և առևտուրը (կապված հին դարերում միջազգային առևտրի հետ), ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դեմ, Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում և այլ գործեր: Մեծ է նաև ակադեմիկոս Գ. Ղափանցյանի ներդրումը Հին Արևելքի պատմության ուսումնասիրման ասպարեզում: